

Ս. ԳՈՐՈԴԵՑԿՈՒ ՀԻՄՆԱԾ ԹԻՖԼԻՍԻ «ԲԱՆԱՍՏՆԵՐԻ
ՀԱՄՔԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ԵՎ ՆՐԱ «ԱՎԵՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՑԱՆ

Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին, ինչպես հայտնի է, 1917 թ. գարնանից մինչև 1919 թ. աշունն ապրել ու գործել է Թիֆլիսում: Նրա բեղմնավոր գործունեությունն անդրկովկասյան ժողովուրդների ժամանակի մշակութային կենտրոնում մի զգալի չափով կապվում է իր իսկ հիմնած ու գլխավորած «Բանաստեղծների համքարության» («Лек поэтов») հետ: Համքարությունը՝ «Ars» («Արս») ամսագրին (որի խմբագիրը Ս. Գորոդեցկին էր) կից 1918 թ. մարտի վերջերին ստեղծված «Արտիստերիումի» բաժիններից մեկն էր: «Բանաստեղծների համքարությունը» նախատիպ էր ունեցել 1912 թ. Պետերբուրգում Ս. Գորոդեցկու և Ն. Դումալյուվի «Բանաստեղծների համքարություն» գրական միավորումը (կազմակերպական նիստեր տեղի է ունեցել 1911 թ. հոկտեմբերի 20-ին Գորոդեցկու բնակարանում)¹: Պետերբուրգյան համքարությունն իր մտայնություններով նախապատրաստել էր ակմեիզմը, որն իբրև բանաստեղծական հոսանք ձևավորվեց 1913 թ.՝ հաղորդելով խորհրդապաշտությունը:

Եվ, ահա, իր ստեղծած Թիֆլիսի գրական նոր միավորումը ևս Գորոդեցկին կնքում է նույն անունով, թեև սեփական հավաստումով՝ «Թիֆլիսի համքարությունն ունեի ավելի ումանտիկ ուղղություն, քան Պետերբուրգինը, բայց... երկուսի գաղափարախոսությունը դեռևս գիտակցված չէր...»²:

Մամուլի հայտարարության մեջ ասվում էր, որ համքարությանը գործակցել ցանկացողները պետք է տաս բանաստեղծություն ներկայացնեն ժյուրիին, որի կազմն էր՝ Ս. Գորոդեցկի, Գ. Ռոբակիձե, Վլ. Պոլսսակ, Յու. Դեզեն³: Եվ արդեն համքարության հիմնադիր նիստին (1918 թ. ապրիլի 12) «Արսի» խմբագրություն են ներկայանում ավելի քան քսան սկսնակ բանաստեղծ: Գորոդեցկու բացման խոսքից հետո ընթերցվում են ավելի քան վաթսուն բանաստեղծություն, որոնց քննարկմանը մասնակցում են ժամանակի հայտնի գրականագետներ⁴:

1918 թ. հուլիսի 20-ին համքարության հավաքույթների թիվն արդեն հասնում էր 14-ի⁵: Դրանք մեծ մասամբ տեղի էին ունենում թավջութակահար Ն. Բենդիցկու երաժշտական ստուդիայում, ինչպես և Ս. Գորոդեցկու, Ալ. Կոպերյակինի բնակարաններում, շորեքաթի օրերին: Համքարության անդամները կարդում էին իրենց ստեղծագործությունները, լսում հետաքրքիր զեկուցումներ գրական ամենատարբեր հարցերի շուրջ (զեկուցել են Ս. Գորոդեցկին, Գ. Ռոբակիձեն, Կ. Զելենսկին, Յակ. Լվովը և ուրիշներ):

«Բանաստեղծների համքարության» հավաքույթների, ընդհանրապես նրա գործունեության մասին ուշագրավ հուշեր է թողել 1918 թ. օգոստոսից համքարության անդամ Հովհաննիս Պողոսյանը: Նա մասնակցել է բոլոր հավա-

1 «Литературное наследство», т. 92, «Александр Блок. Новые материалы и исследования», кн. 2, М., 1981, с. 9.

2 Սերգեյ Գորոդեցկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1980, էջ 296:

3 «Кавказское слово», 28. III. 1918 (№ 70).

4 Նույն տեղում, 13. IV. 1918 (№ 84):

5 Նույն տեղում, 20. VII. 1918 (№ 150):

քույրներին, միջոցառումներին և հետագարձ հայացքով մտաբերում է. «Տրադիցիոն «չորեքշաբթիներն» այն դպրոցն էին, ուր մենք հաղորդակից էինք լինում պոետական վարպետության գաղտնիքներին: ...Առանց շափազանցության կարելի է պնդել, որ մեր «չորեքշաբթիները» բանաստեղծական արվեստին տիրապետելու իսկական դպրոց էին...»⁶:

Հավաքույթներում արժարժված հարցերը, ըմբռնումները պարզ է, որ նեղ պատերի ներսում չէին մնում, զրույցներով, վեճերով, պատմելով տարածվում էին քաղաքի բազմազգ մտավորականության և երիտասարդության շրջաններում՝ շարժելով լայն հետաքրքրություն համաքրոթյան դասախոսությունների, երեկույթների հանդեպ: Վերջիններից հիշատակելի է հունիսի 13-ին Կոնսերվատորիայի դահլիճում կազմակերպված «Արսի» գրական-գեղարվեստական առաջին երեկոն: Առաջին մասում զեկուցումներով հանդես են գալիս Ս. Գորոդեցկին, Գ. Ռոբակիձեն, Յակ. Լվովը: Կոնսերվատորիայի լեփ-լեցուն դահլիճը լարված ուշադրությամբ է ունկնդրում հատկապես Գորոդեցկու «Արվեստ և կյանք» զեկուցումը, որի առանցքը արվեստի անբաժանելի կապն էր կյանքի հետ: Երկրորդը՝ համաքրոթյան, այսպես կոչված, 'անդիսավոր նիստն էր, որտեղ Ս. Գորոդեցկու ներածական խոսքից հետո բանաստեղծություններ են կարդացել հետագայում Պետական մրցանակի դափնեկիր (1942 թ.) Ա. Անտոնովսկայան, Ս. Կորոնան, Զ. Սեմեյկոն և ուրիշներ: Ինքնաբերական խանդավառությամբ է ընդունվել Գորոդեցկու «Ռուսաստան» բանաստեղծությունը⁷:

Լրագրական հաղորդումներից հայտնի է դառնում, որ այդպիսի երեկոներ են կազմակերպվել և հետագայում: Դեկտեմբերի 11-ի երեկոյին ասմունքող Վ. Տիզենգաուզենը կարդացել է Ալ. Բլոկի «Տասներկուսը»⁸, Հո. Պոդոսյանի հուշերից տեղեկանում ենք, որ Ս. Գորոդեցկին Բլոկի «Տասներկուսը» և «Սկյուլները» պոեմների քննությանն ու վերլուծությանը նվիրել է համաքրոթյան հերթական պարապմունքներից մեկը⁹: Այս պարապմունքը պետք է որ հաջորդած լինի «Կավկասկոյի սլովոյում» զետեղված «Տասներկուսին» վերաբերող նրա հոդվածին, ուր ասվում էր. «Մեզ է հասել Ալեքսանդր Բլոկի «Տասներկուսը» նոր գրքի սրբագրական տպվածքը, որտեղ տեղ է գտել այս նոր պոեմը... և, բացի այդ, «Սկյուլները» մեծ բանաստեղծությունը... Ծիծե նույնիսկ այդ պոեմը նվիրված էլ չլինի ժամանակակից Ռուսաստանի պատկերմանը, միևնույն է պետք է որ առաջացնեն մեծ հետաքրքրություն՝ որպես մեր ամենաուժեղ քնարերգականներից մեկի ստեղծագործություն, վաղուց արդեն ընթերցողների սիրելին դարձած մի բանաստեղծ, որը երկար ժամանակ լռել էր:

Բայց հետաքրքրությունը կրկնապատկվում է այն պատճառով, քանի որ այստեղ հասած տեղեկությունների համաձայն Ալեքսանդր Բլոկը հարել է բոլշևիկներին և այսպիսով նրա պոեմում ազատ բանաստեղծի ինտուիցիան միահյուսվում է կուսակցական մարդու կրքոտության հետ:

Շատերին է տարօրինակ թվում, թե ինչպես կարող էր ումանտիկը, Գեղեցիկ Տիկնոջ երգիչը, տրուբադուրը դառնալ բոլշևիկ: Բայց առավել մերձավոր դիտարկումով բանը միանգամայն պարզ է դառնում: Մի կողմից՝ բոլշևիկներն ինքնահատուկ է շատ ու շատ ազատ ումանտիկա: Մյուս կողմից, հայտնի է, որ Բլոկը առաջին հեղափոխության ժամանակ կարմիր դրոշով քայլել է ցուցարարների առջևից, բանաստեղծություններ գրել Ձմեռային պալատի ասպետի մասին... Բլոկը միշտ հետաքրքրություն է ունեցել ժողովրդական, մասնավորապես ֆաբրիկա-գործարանային միջավայրի հանդեպ:

⁶ Հոփսի մե Պոդոսյան, Արձագանք, Երևան, 1973, էջ 37—38:

⁷ «Кадровское слово», 12. VI. 1918 (№ 119), 15. VI. 1918 (№ 121):

⁸ Նույն տեղում, 11. XII. 1918 (№ 268):

⁹ Հոփսի մե Պոդոսյան, Նշվ. աշխ., էջ 35—36:

արդյունքում նրա մոտիկությունը բոլշևիկներին՝ միանգամայն բացատրելի է...»¹⁰։

Սրանք Բլոկի հայտնի սյուների միանգամայն դրական առաջին արձագանքն էին Անդրկովկասում, որոնք և անկասկած լուրջ ներգործություն են ունեցել պոեմի հանդեպ Թիֆլիսի բազմազգ մտավորականության շրջաններում ձևավորված կոզմոնորոշման համար։ Դորոդեցկու ձեռքի տակ եղած սրբազրական եզակի տպվածքից նրա եռանդուն ջանքերով Թիֆլիսի «Кавказский посредник» հրատարակչությունը բազմացնում է Բլոկի «Սկյուրներն» ու «Տասներկուսը»։ Շուտով դրան հաջորդում է Հ. Սուրխաթյանի քննական արժեքավոր հոդվածը «Մշակում», որտեղ քննադատը նուրբ ու խորթափանց դիտարկումներով պոեմը պաշտպանում է այդ ու ձախ հարձակումներից¹¹։ Այսպես, Դորոդեցկու գործունեությամբ՝ և՛ համքարության շախմատներն երով, և՛ անձամբ նրա գրաքննադատական հոդվածներով ու դասախոսություններով Թիֆլիսի հասարակայնությունը, այդ թվում հայ հասարակությունը, մշտապես տեղեկություններ ունեւր ռուսական գրականության ամենավերջին նորություններից, նոր երևույթների, խմորումների մթնոլորտի մեջ էր։

Հասկանալի է, որ «Բանաստեղծների համքարության» հավաքույթներին շոշափվել են լայն շրջանակի հարցեր, որոնք Հո. Պողոսյանի վկայությամբ (որ երևում է նաև մամուլի հաղորդումներից) միշտ էլ եղել են բազմամարդ։ Համալրվող անդամներից բացի, հաճախ մասնակցել են և հյուրեր՝ Կոնսերվատորիայի պրոֆեսոր Ֆ. Հարտմանը, երաժիշտ Ն. Զերեպինը, վրաց պոետների «Նրկնագույն եղջյուրներ» խմբակցության անդամներ Տ. Տաբիձեն, Պ. Յաշվիլին, Վ. Դափրինդաշվիլին, Թիֆլիսում գործող ֆուտուրիստները՝ Ա. Կրուչնիխի գլխավորությամբ։

Համքարության պարապմունքներին բազմիցս մասնակցել է և Թումանյանը՝ իր խորհուրդներով մեծապես օգնել, խրախուսել խմբակցության երիտասարդ անդամներին։ Իր հերթին համքարության անդամներին հայ բանաստեղծը հյուրընկալում էր իր տանը։ Ինչպես հայտնի է, 1919 թ. փետրվարի վերջերին Թիֆլիսում մեծ շուքով նշվում է Թումանյանի ծննդյան 50-ամյակը՝ վերածվելով մշակութային իրադարձության։ Մեկ ամիս շարունակ քաղաքի բազմազգ հասարակայնությունը հարգանքի տուրք էր մատուցում բանաստեղծին։ Տոնակատարություններին անմասն չեն մնում և «Բանաստեղծների համքարության» անդամները։ Ս. Դորոդեցկու «Իմաստուն ու քնքուշ» վերնագրով արժեքավոր հոդվածի կողքին այդ օրերին համքարության անդամներից շատերը գրում են բանաստեղծություններ, որոնցում շերմորեն ցուցադրում են «Կովկասի ժողովուրդների միաբանության ազնիվ... ասպետի» մարդկային ու բանաստեղծական խորունկ էությունը¹²։ Մտաբերներ նաև հետևյալ ուշագրավ փաստերը։ Փետրվարի 20-ին Թիֆլիսի բազմազգ մտավորականության ներկայացուցիչների հետ միասին «Բանաստեղծների համքարության» պատվիրակությունը (Ալ. Կուլեբյակին, Յու. Դանցիգեր, Ն. Բել-Կոն-Լյուբոմիրսկայա կազմով) այցելում է Թումանյանին, շնորհավորում նրան և հանձնում ուղերձ։ «Ձեր տունը ոչ միայն ձեր բազմաշարյար հայրենիքի ժողովրդական տունն է, — ասված է ուղերձում, — այլև մեծ ուրախության օր է բոլոր բանաստեղծների համար, որ ի դեմս ձեզ մեծարում է տիեզերական խոսքի մեծ սպասավորին... Նվ քանի անգամ այս տառնապալի

¹⁰ «Кавказское слово», 10. VIII. 1918 (№ 168); Հմմտ. «Литературное наследство», т. 92, «Александр Блок. Новые материалы и исследования», кн. 2, с. 10.

¹¹ «Մշակ», 5. III. 1919 (№ 49), 6. III. 1919 (№ 50)։

¹² Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի Բանգարանում, Հովհ. Թումանյանի ֆոնդում (№ 1287, 1295, 1298—1299, 1305) պահվում են Թումանյանին նվիրված Ա. Անտոնովսկայայի, Վ. Զոտայի, Ն. Բել-Կոն-Լյուբոմիրսկայայի, Ալ. Կուլեբյակինի, Մայայի բանաստեղծությունները։

տարիներին հնչել է ձեր ձայնը, որպես մարդկության խիղճ։ Այսօր մենք ձեզ ողջունում և փառաբանում ենք իբրև մեծ մարդասերի, հզոր սրտով մարգարեի»¹³։

Փետրվարի 26-ին տեղի է ունենում համքարության 24-րդ նիստը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 50-ամյակին։ Համքարության նախագահի ողջույնից, հայ բանաստեղծին հասցեագրված բանաստեղծությունների ընթերցանությունից հետո (Ալ. Կուլերյակին, Ն. Բել-Վոն-Լյուբոմիրսկայա), հրապարակվում է համքարության որոշումը, ըստ որի Թումանյանը ընտրվում է «Բանաստեղծների համքարության» անդամ։ Այնուհետև «Կոմպոզիտոր Ֆոմա Հարումանը՝ մտաբերելով ամեն տոնախմբություն նոր երգով սկսելու հայկական սովորույթը, հորեկարի պատվին նվագում է հետաքրքիր էտյուդ։ Ալեքսանդր Չերեպնինը կատարում է իր նոր գործերը... Բոլոր պոետները կարդում են բանաստեղծություններ»¹⁴։ Հաղորդման մեջ ասվում է նաև, թե Թումանյանը շնորհակալություն է հայտնել զգացված ճառով, խոսելով արվեստի բոլոր բուրմերի հարազատության ու եղբայրության մասին, և որ վերջում նա՝ համքարության բանաստեղծներին «in corpore (ամբողջ կազմով—Ան. Զ.) հրավիրել է իր մոտ հաջորդ նիստին»։

Որոշակիորեն հենց այդ երկու նիստն էլ իր հուշերում մտաբերում է Հո. Պողոսյանը, գրելով. «...այդ «չորեքշաբթիներից» ...մեկին մեզ հյուր եկավ Հովհաննես Թումանյանը... Մենք հոտնկայս ծափահարում էինք հյուրին, իսկ Սերգեյ Միտրոֆանովիչը (Գորոդեցկին—Ան. Զ.) դիմեց նրան ողջույնի հուզիչ խոսքով... Հետո պոետները կարդացին իրենց բանաստեղծությունները ուսուներն։ Թումանյանը ուշադիր լսում էր, բայց ահա նա ժպտաց, կկոցեց աչքերը, ոտքի ելավ՝ պարթեալանջ, անսովոր մի փայլ աչքերում, մոտեցավ սեղանին։ Ով ահա հնչեցին ու զրնգացին «Հազարան բլբուլի» էպիքական տողերը... Նա վերջացնում է, նկատելի կերպով... հուզված է... Ներկաների խնդրանքով նա վերցնում է «Պոետների ցեխի» ալբոմը և էջերից մեկի վրա գրում է մի քառյակ «Հազարան բլբուլից»¹⁵։ Համքարության փոխայցը՝ ամբողջ կազմով, վերաբերում է մարտի 12-ին։ Ըստ հուշագրական տվյալների, այդ օրը Թումանյանների սեղանի շուրջ լինում են նաև Շիրվանզադեն, Լեոն, Դ. Դեմիրճյանը, Պ. Յաշվիլին, Տ. Տաբիձեն, Ի. Գրիշաշվիլին և շատ ուրիշներ։ Համքարության անդամները նորից կարդացել են բանաստեղծություններ նվիրված Թումանյանին, ապա նրա խնդրանքով դրանք գրել ալբոմում¹⁶։

Վերը բերված փաստերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում մի այլ առումով ևս։ Հայտնի է, որ Թումանյանի հորեկյանական օրերին նրա բարեկամ Ս. Գորոդեցկու զեկուցումով, հոգևածով և թարգմանություններով արևելահայ գրական միջավայրում, երիտասարդության լայն շրջաններում նոր կողմերից, նոր ուժով է հնչում Դ. Վարուժանի ստեղծագործությունը։ Վարուժանի հեթանոսականությունը հարազատ էր Գորոդեցկու բանաստեղծական հակումներին, և նա, անստարակույս, Թումանյանի մղումով և հանձնարարությամբ, դառնում է արևմտահայ նահատակ բանաստեղծի ստեղծագործության գնահատողն ու մասսայականացնողը՝ դահլիճներ զբաղեցնելով ոչ միայն Թիֆլիսում, այլև Երևանում ու Բաթումում։

Վերը քաղված Ֆ. Հարումանին վերաբերող փաստը թեև աղբյուր է անդրադառնալու նորից անմիջականորեն Թումանյանի հորեկյանական այդ օրերի

¹³ «Закавказское слово», 22. II. 1919 (№ 28).

¹⁴ Նույն տեղում, 28. II. 1919 (№ 33).

¹⁵ Հոփիսիմե Պողոսյան, նշվ. աշխ., էջ 64—65.

¹⁶ Նվարդ Թումանյան, Հուշեր և դրույցներ, Երևան, 1969, էջ 201—202, Հոփիսիմե Պողոսյան, նշվ. աշխ., էջ 69—70։ Վերահիշյալ ալբոմը պահվում է Թումանյանների ընտանեկան արխիվում։ Այն տրամադրել է բանաստեղծի դուստրը՝ Թամար Թումանյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

հետ կապվող, իրոք, մշակութային-սլաւոնական մի այլ նախաձեռնության: Փետրվարի 26-ի համաքարութեան նիստի օրերին Թումանյանն անպայման արդեն մոտիկութուն է ունեցել կոմպոզիտոր Հարութանի հետ (որը նոր էր եկել Թիֆլիս) և, անշուշտ, զրուցներ ունեցել հայ ժողովրդական երգի, Կոմիտասի շուրջ: Նվ, ահա՛, շատ շուտով հրապարակվում է նրա «Ժողովրդական երգը և այն ժողովուրդները» շարքի՝ «Կոմիտաս վարդապետ» խորունկ ու ծավալուն հոդվածը: Այդ հոդվածով Հարութանը մինչև այժմ էլ ճանաչվում է որպես Կոմիտասի անգնահատելի վաստակի գնահատողներից մեկը: Պարզ է, սակայն, որ այդ թելերը կրկին տանում են դեպի Թումանյանի անձն ու մշակութային համապարփակ գործունեությունը՝ շղթայական հանգույց ունենալով նաև Ս. Գորոդեցկուն, քանի որ Հարութանի հոդվածը տպվել է «Կապույտ սլովոյում»¹⁷, որի արվեստի ու գրականության բաժինը գլխավորում էր նա: Բացի այդ, հարկ է նշել, որ, թերևս հենց Ֆ. Հարութանի հիշյալ հոդվածի ազդեցությամբ էլ Ս. Գորոդեցկին հոդված է դրել «հայ ժողովրդական երաժշտական իմաստության հավաքողի»՝ Կոմիտասի մասին¹⁸:

Ֆ. Հարութանի հոդվածի տպագրության օրերից ծայր են առնում Թումանյանի, հայ մտավորականության լայն շրջանների ջանքերը՝ հանուն Կոմիտասի ժառանգության հրապարակման ու պահպանության, հանուն հիվանդ երգահանի խնամակալության: 1919 թ. մայիսի սկզբների արդեն Թիֆլիսում հիմնվում է «Կոմիտասի անվան ընկերությունը»: Շուտով՝ մայիսի 21-ին, Արտիստական ընկերության լեփ-լեցուն թատրոնում տեղի է ունենում ընկերության առաջին համերգը՝ Սպ. Մելիքյանի երգչախմբի, Վ. Տեր-Առաքելյանի մասնակցությամբ, Ֆ. Հարութանի գրավիչ ներածական խոսքով¹⁹: Այնուհետև Կոմիտասյան համերգները կրկնվում են բազմիցս. գրանցից ստացված եկամուտները հատկացվում էր Կոմիտասին ու նրա ժառանգությանը: Հիշարժան է, որ Կոմիտասին նվիրված բանախոսությամբ Հարութանը հանդես է եկել նաև Սրևանում²⁰:

Ս. Գորոդեցկին, ինչպես ասում են, համաքարության հոգին էր: Նրա ջանքերով համաքարության գործունեությունը զրված էր բարձր հիմքերի վրա: Այն ունեցել է իր կանոնադրությունը, որի խախտողները՝ Յու. Դեգենը, Վ. Կարա-Մուրդան, Վ. Քաթանյանը, Ն. Վասիլևան, հեռացվել են խմբակցությունից²¹: Այս և այլ տվյալներից հայտնի է դառնում, որ Ս. Գորոդեցկու հիմնած համաքարությունում ընդգրկված են եղել հայ երիտասարդ-երիտասարդուհիներ. Հո. Պողոսյան (Ասիլյանց օրիորդական ազգանունով), Ս. Մելիքովա, Վ. Կարա-Մուրզա, Վ. Քաթանյան (հետագայում մայակովսկիա-

17 «Заквказское слово», 28. II. 1919 (№ 33); 1. III. 1919 (№ 34).

18 Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրերին, Ս. Գորոդեցկին Նվարդ Թումանյանին ուղղած նամակում (1949 թ. սեպտեմբերի 27) գրում է. «30 տարի առաջ, Թբիլիսիում ես գրել եմ նրա (Կոմիտասի—Ան. Զ.) մասին.—երանի թե գտնեի հիմա իմ արխիվում այդ հոդվածը: Հիմա ես Կոմիտասի մասին ավելի շատ բան գիտեմ, քան այն ժամանակ: Սակայն նրա հետ իմ ծանոթության այն ժամանակվա առաջին կենդանի տպավորությունը կօգնե ինձ Մոսկվայում մասնակցել 2եր ժողովրդական տոնին (Ս եր գ ե յ Գ ր օ ռ Դ Ե ճ կ ի, նշվ. աշխ., էջ 293):»

19 «Кавказское слово», 23. V. 1919 (№ 98); 24. V. 1919 (№ 99).

20 «Աշխատանք», 8. VII. 1919, № 42 (250):

21 «Кавказское слово», 15. VI. 1918 (№ 121). Ս. Գորոդեցկու գլխավորած համաքարությունից բացի, Թիֆլիսում այդ նույն ժամանակ եղել է նաև «Օղադրահ» («Кольчуга») զեղարվեստական ընկերությանը կից մի այլ «Բանաստեղծների համաքարություն» [նույն տեղում, 20. VII. 1918 (№ 150)], որը գլխավորել է առաջինից հեռացված Յու. Դեգենը [նույն տեղում, 22. X. 1918 (№ 226)]: Թիֆլիսից Գորոդեցկու մեկնելուց հետո դրանք 1919 թ. նոյեմբերի վերջին—դեկտեմբերի սկզբին միավորվել են [«Слово», 30. XI. 1919 (№ 89); 4. XII. 1919 (№ 92)]:

դետ) և ուրիշներ: Հետաքրքիր է Վ. Կարա-Մուրզայի և Վ. Քաթանյանի առնչությունը համաքուլթյան հետ: Նրանք միասին 1917 թ. վերջերին հրատարակել են «Կապույտ երեկոյան» վերնագրով բանաստեղծությունների մի գիրք, որն արժանացել էր Ս. Գորոզեցկու՝ այսպես ասած, քննադատական խրատականքին: Իր «Ֆուտուրիզմը պոեզիայում» հոդվածի վերջում, անդրադառնալով գրքի հեղինակների ֆուտուրիստական հովերին, ռուս բանաստեղծը գրում էր, թե նրանց հասակն այնպիսին է, երբ դեռ իրենցը չունեն և ուրիշներին դեռ չեն տա՝ իրենց «երիտասարդ ուղեղը շահագործում են» ուրիշներին կրկնելով, և որ, այնուամենայնիվ, նրանք ունեն բանաստեղծական շնորհք, որ կարելի է ցույց տալ մի-երկու տողով, մի-երկու պատկերով²²: Հաս երևույթին դրանից շուված Վ. Կարա-Մուրզան և Վ. Քաթանյանը անդամագրվել էին համաքուլթյանը, բայց հետո, չազատագրվելով ֆուտուրիստական գայթակղությունից, «խախտել էին կանոնադրությունը» և հեռացվել: Շուտով, 1919 թ. ապրիլի կեսերին լույս աշխարհ է գալիս համաքուլթյան անդամների չափածո գործերի առաջին ժողովածուն՝ «Ակմն» խորագրով: Ժողովածուն ամփոփում էր քանակապես հզու գործերը՝ դասավորված ալբերենական կարգով: Այդ բանաստեղծներից չորսը, ըստ Հո. Պողոսյանի, հայ էին²³: Հեղինակների մեջ զգալի թիվ էին կազմում, ինչպես նկատել է Ի. էրենբուրգը, «պոետական ազգանուններով» բանաստեղծուհիներ²⁴: Գիրքը բացվում է Աննա Անտոնովսկայայի «Մթնշաղ» բանաստեղծությամբ՝ որոշակիորեն զրված խորհրդապաշտական արվեստի հետևությամբ:

Парапнув воздух, я вползу в окно,
Живых мохнатой лапою пугая,
Мечтательность за мной войдет нагая
В сердца людей влить терпкое вино.

Скользну к роялю, обниму панно,
В цветах дразню тихонько попугая ...
Уймусь в углу, тооку подстерегая,—
Меж тьмой и светом зыбкое звено...²⁵—

և այսպես օրորվող երազայնության, մութի և լույսի խաղ, միմյանց ձայնակցող հանգեր, տխրամած երաժշտականություն, որոնք հատկանշական են համարյա բոլոր հեղինակներին: Նկատվում է, որ բոլոր բանաստեղծությունների վրայով անցել է Ս. Գորոզեցկու փորձված ձեռքը: Հեղինակների փոքր մասը միայն որոշ քայլեր էր արել, մեծ մասը սկսնակների խումբն էր կամ, ինչպես ինքն էր կատակով անվանել՝ «պոեզիայի «մանկապարտեզը»²⁶:

Վերը նշված ընդհանուր առանձնահատկությունները բնորոշ են Գ. Բամելի, Ա. Գերբսմանի, Յու. Դանցիգերի ստեղծագործություններին, Ն. Բել-Կոն-Լյուբոմիրսկայայի, Ն. Գրաջիանսկայայի, Մ. Դե-Կապրելիվիչի, Վ. Զոտայի, Օ. Կամակայի, Ն. Կապրանովի, Ալ. Կուլբրյակինի, Մայայի, Ս. Մելիքովայի, Կ. Օբրազցովի, Տ. Պոլյարկովայի, Վլ. Պրուսակի, Ալ. Ռադիկեի, Ս. Ռաֆալովիչի, Վլ. Սապոժնիկովի, Ն. Սեմեյկոյի չափածո գործերին: Տարբեր բովանդակություն և երանգներ ունեցող այդ բանաստեղծությունների հիմնական մոտիվները սերն ու բնությունն են: Թախծոտ սեր՝ հանդիպումի անուրջներով, բաժանման ու սպասումի տագնապներով, երիտասարդական տխրու-

²² «Кавказское слово», 20. I. 1918 (№ 15).

²³ Հ ա թ փ ա ի մ ե Պ ո ղ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 52:

²⁴ Илья Эренбург, Люди, годы, жизнь, кн. 1 и 2, М., 1961, с. 513.

²⁵ «Акмэ. Первый сборник тифлиссского цеха поэтов», Тифлис, 1919, с. 3 (այսուհետև ժողովածուից բերվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստում).

²⁶ Հ ա թ փ ա ի մ ե Պ ո ղ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 37:

թյամբ, երբեմն մարմնավորված բանաստեղծական վարակիչ հույզով ու պատկերավորությամբ, ինչպիսիք են Թիֆլիսի իգական գիմնազիայի շրջանավարտ Տատյանա Պոյարկովայի բանաստեղծությունները.

Упорством золота пронзив
Последней тучки волоконец,
Вдруг забарахталось в грязи
Развеселившееся солнце...

В моей комнате в сумерки бродит
Голубая, как вечер, печаль
И рукой осторожной проводит
По лицу моему, по плечам.

Ея бархатный шаг так не весел,
Обойдет, обовьет синевой
И потом не отходит от кресел,
Где мы утром сидели с тобой (46—47).

Ահա տողեր նրա բավականաչափ վարակիչ մեկ այլ բանաստեղծությունից.

Декабрьский день уходит рано,
Слегка закат позолотив,
Сползает в улицы туманом
Небес сиреневый отлив.

И в эту муть, как по неволе,
Иду я в сумерки бродить,
О, еслиб знал ты, сколько боли,
Как тяжело тебя любить! (47)

Սրանք գողտրիկ չափատողներ են՝ ուրվագծվող լուսաստվերային, գունային մթնոլորտով, միմյանց արձագանքող հնչյնախաղերի երաժշտականությամբ, համակող տրամադրությամբ:

Ժողովածուի հեղինակներից շատերի սիրային երգերը հաստատում են այն, ինչ դիտել է Ի. Էրենբուրգը. «Թիֆլիսյան համբարություն» բանաստեղծները գրում են սոնետներ Սվարոգի, Էրոսի, Սուլամիտի, Սանավալատի, Մոնֆորի և նրանց նույնքան մոտ մյուս գործող անձանց մասին»²⁷: Այդ երգերից անբաժան են խորհրդավորության շղարշը, առանձնության ու միայնության տրամադրությունները: Սիրային այդ երգերում սերը մարմնավորվում է բնության առարկաների, երևույթների փոխաբերությամբ կամ խորհրդանշությամբ, այնպես, ինչպես տեսնում ենք Գորոդեցկու կնոջ՝ Նիմֆա Բել-Կոն-Լյուբոմիրսկայայի այս տողերում.

Двухцветный шиповник,
Неверный любовник,
Мне нравишься ты.
Наверно, пришел ты,
Оранжево-желтый
Из сада мечты.

²⁷ Илья Эренбург, *Ել. աշխ.*, էջ 513:

Огнем обнимаешь,
Когда принимаешь
Лобзание в уста,
И светишься, алый,
Как блеск запоздалый,
На ветках куста (12).

Բազմազան են բնութիւն երգերը՝ մի նկատելի մասով նվիրված ռուսական բնութիւնը, որոնցից շատերը առանձնանում են բնութիւն երևութների քնարական ընկալումներով, մտահղացումներով: Դրանց մեջ հանդիպում ենք ռուս ժողովրդի պատմութիւն, կենցաղի ու հոգեբանութիւն արծարծումների, հաճախակի կրկնվում է ռուսական հողի խորհրդանշը սրբութիւնը՝ մայր Վոլգան: Վասիլի Զոտայի «Վոլգա» շարքից զետեղված մի բանաստեղծութիւն մեջ Վոլգան պատկերվում է որպէս ռուսական գեղեցկուհի՝ ինչ-որ տեղ հյուծված, ինչ-որ ժամանակ առանց փեսայի՝ երկկողմանի տանջված:

Жизнь девичья—не жизнь без жениха,
А молодцу без милой жизнь—мученье.
Ах, бурное, прекрасное течение! (28),—

Բայց ճակատագիրը ժլատ չէ, և բերում է Ստեփան Ռազինի նման տղամարդու: Մայր Վոլգայի և Ստեփան Ռազինի զուգորդութեամբ է հյուսված և Նիկոլայ Կապրանովի «Վոլգան»:

Մայր Վոլգա—Պուգաչով, երմակ, ավելի շատ Ստեփան Ռազին—այս կերպարների ներկայութիւնը նրանց բանաստեղծութիւններում հեղափոխական կողմնորոշման ու տրամադրութիւնների արտահայտութիւն էր՝ զգալի չափով բորբոքված նաև Վ. Կամենսկու «Ստեփան Ռազին» երկի ազդեցութեամբ: Վ. Կամենսկին Թիֆլիսում ճանաչված ու սիրված գրող էր իր երկով, գուցե, ավելի շատ իր ելույթներով կրկեսում՝ Ռազինի հագուստով, ձին հեծած: Եվ, ահա, Ռազինի կերպարը լայնորեն արծարծվում էր նաև համաթարութիւն ժողովածուում:

Ժողովածուում տեղ են գտել նաև Թիֆլիսին նվիրված բանաստեղծութիւններ՝ քաղաքի, հիշարժան վայրերի, բնակլիմայական, մարդկային-կենցաղային մթնոլորտի անդրադարձումներով: Այդպիսի չափատողներից մեկը պատկանում է Թիֆլիսում հայ մտավորականի ընտանիքում ծնված և մեծացած Հռիփսիմե Ասիլյանցին, ու թեև նրա առաջին փորձերից է, բայց բավականաչափ հարթ է, մշակված (անշուշտ, Գորոդեցկու օգնութեամբ): Կարգալով այն առնում ես հին Թիֆլիսի արեւելյան համն ու հոտը, զգում քաղաքի կոլորիտը:

Змеей свернулся город старый
И в пасть времен направил взгляд,—
Века под звонкий рокот тары
Не изменили свой наряд.

Как раньше, лентой вьется вдовьей
Куры чернеющий атлас
И под чадрой татарки брови
Хранят все ту же гайну глаз...

Чуть слышно в небе кипарисы
Колышат полог синевы,
И в стенах чайных притаился
Напев стихов Саят-Новы (6).

Հին Թիֆլիսի մթնոլորտից անբաժան Սայաթ-Նովան՝ բազմիցս հոլոված հայ և վրաց պոեզիայում, երևում է նաև Ասիլյանցի ուսանող լեզվով գրված չափատողներում: Հնագրայան քաղաքն իր արևելյան խայտանկար բանաստեղծականությամբ սրբություն էր հայության, նրա բոլոր զավակների համար: Ժողովածուում զգալի տեղ են գրավում հակապատերազմական չափատողները՝ ներթափանցված ցավատանջ տրամադրություններով, անեծքով ու քողորով: Հեղինակների մի մասը մասնակցել էր Կովկասյան ճակատի կռիվներին և հիմա ահեղ անեծք էր կարդում արյան ու ավերի արհավիրքներին: «Պատերազմ» վերնագրով սոսնետում Յուրի Դանցիգերը գրում էր.

...Мать гекатомб являет новый лик,
Смотав нам мысль в клубок кровавых ниток,
Под хохот бомб и вой лиддитных пыток...

Гнилых культур лекарственный ярлык,—
Все тот-же ты, проклятый пережиток!
Как гнусен твой коснеющий язык! (21)

Կարծես այս նույն շարքին է պատկանում Ֆր. Շոպենին նվիրված նրա սոսնետը, որտեղ հիմներգելով երաժշտությունը՝ դաշնամուրի սիրտ սեղմող ակորդներով, երգչախմբային ալիքավորվող մաքրությամբ ու փայլով, հեղինակը ավելացնում է.

...Но о земном скорбит, далек восторгам хора,
И реет вновь к юдоли слез Шопена дух,
Лиясь сладчайшею печалью fa minor'a (22).

Նույն հակադրությամբ են կառուցված Ս. Գորոդեցկու «Notturmo 1-mo» և «Notturmo 2-do» բանաստեղծությունները, որոնք առանձնանում են փոփոխվող ամենատարբեր հանգերով հյուսվող երաժշտականությամբ, աշխարհի ալյանդակությունների և մարդկային ստեղծագործ ոգու հակադրությամբ: Պատերազմական փոփոխված աշխարհավեր խելահեղության միջից՝ ընդդեմ մարդ գաղանի, մարդասպանության ու կոտորածի գլուխ է բարձրացնում ծառացած մարդկային հանճարը նորից նոր գովերգելու կյանքը, մարդկային փնսասիրության անպարտելի ուժը.

...И тщетно в бездне райских областей
Палитры ищет Врубель и кистей.

Обходит смерть, раскоса и хрома.
От страха побелевшие дома.

И пальцами дрожащими лучист,
К роялю подбегает пианист.

И Скрябина таинственный прелюд
Терзают тихий комнаты уют (15).

Ոչ մի հետք չի մնացել վաղեմի ռազմաշունչ տրամադրություններից: Բանաստեղծը նզովում է քանդարար պատերազմը, մարդկային ստեղծարար ոգու հետ միասին բարձրացնում մարդ արարածին՝ նրա կյանքի ու գոյության անգնահատելի արժեքով: Դրա առավել ինքնատիպ արտահայտությունն է՝ «Անմահություն» բանաստեղծությունը՝ հյուսված հետաքրքիր մտահղացումով: Բանաստեղծության առաջին տողերից՝

Налегла и дышать не дает
Эта злобная зимняя ночь—

Թանձրացնելով անքնության, սարսափի ու մահվան պատկերները, այդ մռայլ մթնոլորտին վերջին տողերում հակադրում է մարդ արարածի արժեքը նրան ստեղծողի տեսակյունից.

...Золотой чешуею звеня
И шипя издыхающим ртом,
Гаснет в мокрой печи головня.
Холод барином входит в мой дом.

Не стянуть отсыревших сапог
И пальтишком костей не согреть.
В потемневшей фольге плачет бог,
Что не может со мной умереть (17).

Աշխարհից հեռացող մարդ էակի հետ լացով ուզում է մեռնել, աշխարհից հեռանալ ինքը՝ արարիչը, մինչդեռ պատերազմական դժոխքում ամեն ժամ մարդիկ ոչնչացնում են միմյանց: Տրամաբանական եզրակացությունն այն է, թե՛ ի՞նչ իրավունքով:

Այս առումով ուշագրավ են նաև Ալեքսանդր Կուլեբյակինի բանաստեղծությունները: 1917 թ. առանձին գրքով լույս էր տեսել նրա «Մահերի դուռը: Վանի արձագանքներ» գիրքը՝ արժանանալով Ս. Գորոդեցկու գրախոսությանը: Ալ. Կուլեբյակինի այս գիրքը, նրան կցված ծանոթագրությունները անպայման հետաքրքրություն են ներկայացնում Կովկասյան ճակատի, հատկապես Վանի իրադարձությունների վերակենդանացման առումով: «Վանի բանաստեղծությունները գրել եմ տեսած վայրերի և լսած պատմությունների անմիջական տպավորության տակ: Ես Վանում եղել եմ 1915 թ. նոյեմբերից մինչև 1916 թ. մարտը: Անեկարագրելի ծանր տրամադրություն է առաջացնում այդ վերջնականապես քայքայված, մահով լիքը երկրամասը, բայց նրա բնությունը զարդարում է անդամ ամայության ու կործանման սարսափը: ...Ամենուր վեհության և հնությունների հետքեր են: Եվ անվերջ տվերակներ, ավերակներ»²⁸, — գրել է նա «Վանի արձագանքների» առաջաբանում՝ թվագրված 1916 թ. մարտի 25, Վան:

Կուլեբյակինի մասին հիշատակություն ենք գտնում Հռ. Պողոսյանի հուշերում: «Հերթական հավաքույթի ժամանակ (խոսքը «Բանաստեղծների համաքարոթյուն» հավաքույթի մասին է—Ան. Զ.), — գրում է նա, — Հայաստանին նվիրված իր բանաստեղծության ընթերցանությամբ ելույթ ունեցավ պոետ-գեներալ Ալեքսանդր Կուլեբյակինը՝ մի շատ պատկառելի անձնավորություն, որը շնայած իր տարիքին «Лех»-ի ակտիվ անդամներից էր»²⁹: «Պոետ-գեներալը» ուսական բանակի՝ Վանում գործած զինվորական աչքի ընկնող դեմքերից էր: Ալ. Կուլեբյակինին հարազատ էր հայ ժողովուրդը, նրա հոգևոր մշակույթը, որի հանդեպ նրան հետաքրքրություն ու սեր էր ներարկել Թուրքիայում: Հայտնի է նաև, որ այդ ընթացքում, մի քանի անգամ լինելով Թիֆլիսում, նա հանդիպել է հայ բանաստեղծին, ունկնդրել նրա խորհուրդները, որին և նվիրել է սրտառու շափատողեր: Մանոթանալով հայ ժողովրդական էպոսին, լեգենդներին ու հեքիաթներին, Կուլեբյակինը դրանք ներկայացրել է իր մշակումներով, որոնցից են վերը հիշատակված «Մահերի դուռը» և «Աղթամար» լեգենդը³⁰, «Հարկ է լինել այդ լեգենդների իրողու-

²⁸ А. Кулебякин, Дверь Мехера. Отзвуки Вана, Издание армянского комитета «Верашинутюн», [1917], с. 43.

²⁹ Հ ռ ի փ ս ի մ ե Պ ո ղ ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 49:

³⁰ О. Т. Ганалаян, Армения в творчестве русских поэтов, Ереван, 1972, с. 81—82, 84—85.

թյունների վայրում, պետք է անձամբ տեսնել այդ հնադարյան հուշարձանները, անցյալի գիրկն անցած մշակութային կիսամաշ հետքերը, այդ վեհ ու հանելուկային բնությունը, պետք է հենց տեղական կյանքի մթնոլորտում դիտել նրա կենցաղի բնորոշ գծերը, որոնք պահպանել են շատ հնադարյան ձևեր՝ ավելի խորը հասկանալու և զգալու համար այդ բաղմաշարչար երկրում ծնված պոեզիայի գեղեցկությունը»³¹, — դրել է նա Վանում 1916 թ. հունվարի 8-ին:

«Ակմեում» Ալ. Կուլբեյակինից տեղ են գտել երեք գործ՝ բոլորն էլ ուղղված պատերազմի դեմ: Տեղանքի, մթնոլորտի փոքր-ինչ մանրամասներով հյուսված «Արաքսը» առաջին երեք քառյակով կարծես սովորական բնապատկեր է՝ գետը բնութագրող դիպուկ մտապատկերներով.

Играющий Аракс в разливе красных вод
Течет глубоким коридором.
Вверху уступы скал—граниты всех пород,
И мох ползет по ним узором (36).

Խոր միջանցքով կարմրագույն ջրերով հոսող գետը այնուհետև գծագրվում է ժայռերի ծերպերին բուսած թփերով, թռչնաբներով, գետի աղմուկին ձայնակցող արծիվների կոխելով, նրանց թևերի թեք-թեք ստվերներով՝ արևի շողերի տակ: Ապա հանդիսավոր բնապատկերը վերջին երկու քառյակում բացվում է իր «թաքցրած» մարդկային դարավոր հառաչանքներով ու ողբերգությամբ, որով ընդհանրացվում է հայ ժողովրդի պատմությունը, նրա ապրած արյունոտ մղձավանջը.

Немолчный гул воды, неясный полусвет
И ветра замкнутого вздохи.—
На всем угрюмый тон, оттенок бездны лет,
Печать таинственной эпохи.

Из сумрака времен события встают,
Немые тени оживают,
И кажется порой, что камни вопиют,
А волны кровь переливают (36).

Հայ գրականության մեջ Արաքսը արդեն մի անգամ չէր որ ծառայել էր որպես ժողովրդի գլուխյան ու ճակատագրի խորհրդանիշ: Հիշենք Բաֆու հանրահայտ «Սամվել» վեպը և Թ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը»: Եվ այժմ, ահա, նկատելի ինքնատիպ հնչեցումով օգտագործում է հայ ժողովրդի պատմությանը, բախտին իր ազնիվ ու կարեկից սրտով մոտիկից ծանոթ «պոետ-գեներալը»:

Իրոք, Կուլբեյակինը Կովկասյան ճակատում շատ ծանր է ապրել պատերազմական արյունահեղությունը, որ առավել խտացած տրամադրություններով գալիս են փաստելու նրա հաջորդ չափատողերը: «Երազ տեսա ես...» արտահայտությամբ սկսվող բանաստեղծության մեջ նա մարդկությանը գուշակում է սպառում աստծու պարգևած մարդկայնությունից.

Я видел сон: ушли в туман года.
Весь род людской истаял понемногу,
Изжив себя и опостылев Богу,
И зверь вошел в пустые города (37).

³¹ А. Кулебякин, *Եղվ. աշխ.*, էջ 3:

Կարողալով բանաստեղծութիւնը ակամա մտաբերում ես Կովկասյան ճակատի արհամարքներին ականատես եմ. Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի «Մեռած Քաղաքի» պատկերները.

Մեռած Քաղաքում ո՛չ մի մարդ չկար:
Եվ ամայացած շենքերը ավեր,
Մութ, մահատեսիլ, կույրերի նման
Փորած աչքերով նայում էին վեր...

... Չգիտեմ ինչու—մենք մտանք մի տուն...

... Ներս մտանք: Տեսանք՝ կոտրած թախտի մոտ
Ընկած էր մի կին՝ արնաշաղ ու մերկ:
Խոռոչի նման բացված ահահոտ՝
Քրքշում էր կարծես բերանն արնաներկ:
Իսկ կոնքերն ու շոր ծծերն արյունոտ
Պատմում էին մեզ պղծումներ անելք³²:

Չարենցի պատկերած «Մեռած Քաղաքը» վանն է՝ ավերված, հրկիզված տներով ու այգեստաններով, պղծված, խողխողված մարդկանցով: Այդ քաղաքում Չարենցը եղել էր որպես կամավորական բանակի զինվոր, Կուլբեյակինը՝ ռուսական բանակի հրամանատարներից: Անկասկած նույն տպավորություններով ու վերապրումներով է հյուսվել նաև հակադարձ մտահղացումով կառուցված Կուլբեյակինի վերոհիշյալ բանաստեղծությունը: Երազում դատարկ քաղաքները բնակեցված տեսնելով գազաններով, հեղինակը հակադարձ իմաստով ծառանում է մարդկային գազանության դեմ, մարդկության փաշտալից «Համաշխարհային Բանականության» հաղթանակը տեսնում առանց պատերազմող մարդ գազանի հարատևող՝ հավերժորեն երիտասարդ ու գեղեցիկ աշխարհում.

И, рдея жизнью вечно молодою,
Земля без нас мирам иных планет
Сияла той же светлою звездою (37).

Ի լրումն և ի հաստատումն այդ գաղափարի, Կուլբեյակինի հաջորդ բանաստեղծությունը նվիրված է հավերժորեն երիտասարդ ու գեղեցիկ աշխարհին՝ բնությանն ու բնական կյանքով ապրող մարդուն: Անտուսներով ստվերված կանաչապատ լանջեր, լեռներից ձոր շտապող աղբյուրներ ու առվակներ, մայրական օրորոցային երգեր, հովվական նվագի արձագանքներ՝ «Համաշխարհային կյանքի» հաշտ ու խաղաղ այդ փոքրիկ անկյունին նա նվիրում է սրտագին գորովանքի խոսքեր: Դրանք անաղարտ բնության և բնության անաղարտ մարդու մի տեսակ ռուսոսյական երազանքի տուրք են, պատերազմական մղձավանջից հոգնած իսկական մարդու բնական ձգտման արտահայտություն: Այս և նախորդ բանաստեղծություններով մեր առջև բացվում է Կուլբեյակինի հոգու ազնվությունն ու բանաստեղծականությունը, նրա տառապանքը պատերազմական թռհուրոհի մեջ նետված մարդկության, աշխարհի «փոքրիկ անկյունի»՝ գեղատեսիլ Հայաստանի և նրա բազմաշարժար ժողովրդի համար:

Կուլբեյակինի մարդկային երևույթը, իրոք, բնութագրական է Գորոդեցկու կողքին: Մեկը բանաստեղծ-գեներալ, մյուսը՝ բանաստեղծ-խնամատար, Կովկասյան ռազմաճակատում տեսնելով հայ ժողովրդի կրած տառապանքները և՛ գործով, և՛ գրչով նվիրաբերվում են այդ ժողովրդի պաշտպանու-

³² Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963, էջ 25:

թյանն ու փրկությանը՝ յուրովի խորհրդանշելով ոռու ժողովրդի մարդասիրական էությունն ու ազատարար առաքելությունը: Թումանյանի հետ Գորոդեցկու բարեկամության կողքին հարկ է մշտապես մտաբերել նաև Թումանյանի բարեկամությունը Կոլեբայակինի հետ, որն իր անձով ներկայացնում է ոռու ժողովրդի լավագույն զավակների անշահախնդիր օգնությունը հայ ժողովրդին՝ վերջինիս նեղ օրերին:

Մենություն, մուսլություն, կրոնական տրամադրությունների առանձին դրսևորումներով հանդերձ, հիմնականում այսպիսի դադափարներ է շոշափում «Ակմե» ժողովածուն, որտեղ խմբված բանաստեղծությունների գերիշխող մասը առանձնանում են մարդկային սիրով ու նվիրվածությամբ, բարու, դեղեցիկի, մարդկային համերաշխության և խաղաղ կյանքի մղումներով:

Ինչպես ասվեց, «Ակմեն» կրում էր «առաջին ժողովածու» ենթախորագիրը, բայց Թիֆլիսի «Բանաստեղծների համաթարությունը» երկրորդ ժողովածուն շունչեցավ: Կարճ ժամանակից՝ 1919 թ. աշնանը, Ս. Գորոդեցկուն վիճակեց փոխադրվել Բաքու, և համաթարության դրժունեությունը ղգալիորեն թուլացավ:

ОСНОВАННЫЙ С. ГОРОДЕЦКИМ В ТИФЛИСЕ «ЦЕХ ПОЭТОВ» И ЕГО СБОРНИК «АКМЭ»

АНУШАВАН ЗАКАРЯН

Резюме

Русский поэт С. Городецкий с весны 1917 г. до осени 1919 г. жил и творил в Тифлисе. Его деятельность в эти годы была связана с созданным и возглавляемым им «Цехом поэтов». Цех был одним из отделений объединения «Артистериум», созданного в конце марта 1918 г. при журнале «Арс». Учредительное заседание цеха состоялось 12 апреля 1918 г. Участники собирались каждую среду, читали свои произведения, слушали интересные лекции на разнообразные литературные темы. Особый интерес вызвали чтения и обсуждения произведений А. Блока, в частности поэмы «Двенадцать», и заседание, посвященное Ов. Туманяну. На «средах» всегда было многолюдно: кроме самих участников, бывали и гости—профессор консерватории Ф. Гартман, музыкант Н. Черепнин, грузинские поэты Т. Табидзе, П. Яшвили, В. Гаприндашвили, тифлиссские футуристы во главе с А. Крученых. Интересные сведения есть об участии в этих встречах Ов. Туманяна.

В конце апреля 1919 г. усилиями С. Городецкого был издан первый поэтический сборник членов цеха под названием «Акмэ». Книга включала произведения 22 поэтов. Подавляющее большинство вошедших в сборник стихов отличается гуманизмом, стремлением к добру и красоте, взаимопониманию и дружбе между людьми; выделяются произведения С. Городецкого и Ал. Кулебякина, направленные против войны и насилия.